▶ To cite this version:

| . . 2020, 10.5281/zenodo.5730995 . hal-03545731

HAL Id: hal-03545731
https://hal.science/hal-03545731v1

Submitted on 27 Jan 2022

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Copyright

Թուրքիայի սպառազինության արտահանումն ու ներմուծումը

Արեստակես Միմավորյան

DOI:10.5281/zenodo.5730995
Published online: Octember 30, 2020
Publisher: Orbeli Center[1]

Ներկայումս Թուրքիայի Հանրապետությունն ունի բավականաչափ զարգացած ռազմական արդյունաբերություն, որն ի վիճակի է սպառազինության և զինտեխնիկայի հիմնական տեսակներով բավարարել երկրի զինված ուժերի կարիքները: Զուգահեռաբար, Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության ոլորտում ռազմական նշանակության արտադրանք թողարկող ձեռնարկությունները վերջին տասնամյակում ավելացրել են սեփական արտադրության արտահանման ծավալները: Այդուհանդերձ, Թուրքիան դեռևս կախվածություն ունի ինչպես արտասահմանյան տեխնոլոգիաներից և հումքի որոշ տեսակներից, այնպես էլ զենքի արտաքին շուկաներից:

Թուրքիայի պաշտպանական արդյունաբերությունը նշանակալի արդյունքների է հասել 2000-ական թթ., իսկ վերջին տասնամյակում սեփական ռազմական կարողությունները զարգացնելու նպատակով ձգտում է հասնել ինքնաբավության և առավելագույնս օգտագործել արտահանման հնարավորությունները: «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց ի վեր, համաձայն պաշտոնական տվյալների, Թուրքիան ռազմարդյունաբերության ոլորտում ներդրել է ավելի քան $ 35 մլրդ. (2003-2018թթ.)[2]: Ավելացել են նաև ռազմական և ավիացիոն արտադրության զարգացման ծախսերը՝ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների մասով 58 մլն.-ից (2003թ.) հասնելով $ 1.672 մլրդ. (2019թ.)[3]: Ծախսերի ավելացումը վկայում է, որ Թուրքիան հետևողականորեն զարգացնում է պաշտպանական արդյունաբերությունը՝ շեշտը դնելով նաև բարձր տեխնոլոգիաների վրա:

---

[1] **Source:** https://tinyurl.com/z74x3cdt

[2] Savunma yatırımları 35 milyar doları geçti, https://www.yenisafak.com/ekonomi/savunma-yatirimlari-35-milyar-dolari-gecti-3163928

[3] Savunma ve Havacılık Sanayii İmalatçılar Derneği, Performans raporu 2019, s. 12, https://www.sasad.org.tr/uploaded/Sasad-Performans-Raporu-2019.pdf

Նույնը կարելի է ասել թուրքական արտադրության սպառազինությունների արտահանման մասին: Ռազմարդյունաբերական ոլորտը բոլոր միջոցներով ձգտում է թուլացնել կախվածությունն արտաքին ռեսուրսներից և ընդլայնել սեփական ռազմական արտադրության արտահանումը: Եթե 2003թ. Թուրքիայի սպառազինության արտահանման ծավալները կազմում էին $330 մլն., ապա 2018թ.-ին՝ $2.188 մլրդ.: Նպատակ է դրվել մինչև 2023թ. սպառազինության արտահանումը հասցնել $10 մլրդ.-ի[4]: Մյուս կողմից՝ ուշագրավ է նաև այն, որ 2018թ.-ի համեմատ 2019թ.-ին 13%-ով նվազել են ռազմական արդյունաբերության ստացված պատվերները [5], ինչը բացասաբար կանդրադառնա արտահանման ծավալների վրա:

Թուրք ռազմական փորձագետների գնահատականներով՝ այսօր իսկ Թուրքիան օրըստօրե դժվարանում է պահպանել ռազմական արդյունաբերության արագ զարգացումը և ապագայում խնդիրներ է ունենալու սպառազինության արտահանման ընդլայման հետ:

Այս առիթով թուրք ռազմական փորձագետ Մ. Գուրջուն նշում է, որ թուրքական պաշտպանական արդյունաբերական ընկերությունները պայքարում են արտաքին շուկաներ նվաճելու համար, այն դեպքում, երբ ոլորտն ունի վստահության, ապրանքների որակի և արտահանման կառուցվածի հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Ռազմարդյունաբերության առաջընթացի դանդաղումը առաջին հերթին պայմանավորված է ոլորտի ծայրահեղ քաղաքականացմամբ, կլանային կապիտալիզմով և ուղեղների արտահոսքի պատճառով առաջացած մարդկային ռեսուրսների սակավությամբ: Երկրորդ՝ հետազոտական և մշակումների ոլորտում ներգրավված ռազմարդյունաբերական ձեռնարկությունները միմյանց հետ ներքաշվում են մտավոր սեփականության իրավունքի խախտումների իրավական գործընթացների մեջ: Դրանով պայմանավորված՝ նվազում է ոլորտի նկատմամբ վստահությունը, ինչը հետ է պահում ռազմական ընկերություններին միմյանց հետ համագործակցելուց և համատեղ ձեռնարկություններ ստեղծելուց: Ըստ հեղինակի՝ միաժամանակ, երբ ոլորտն այժմ ապահովում է ներքին կարիքների 90%-ը, ու ներքին շուկան, կարծես թե հասել է

[4] 2019-2023 Stratejik plan, s.34, 44
https://www.ssb.gov.tr/Images/Uploads/MyContents/V_20191213172340705166.pdf
[5] Savunma ve Havacılık Sanayii İmalatçılar Derneği, Performans raporu 2019, s. 8

հագեցման կետի, առանց արտաքին վաճառքների Թուրքիան դժվար թե կարողանա պահպանել ոլորտի ընդլայնումը[6]:

Այս համատեքստում անդրադառնանք սպառազինություն արտահանող թուրքական ռազմարդյունաբերական այն ընկերություններին, որոնք տեղ են զբաղեցրել «DefenceNews»-ի՝ աշխարհի խոշորագույն բարձր տեխնոլոգիական ռազմարդյունաբերական ընկերությունների վերաբերյալ 2020թ. հրապարկված «TOP 100» վարկանիշային աղյուսակի տարբեր հորիզոնականներում:

1. **Aselsan**-(48-րդ հորիզոնական): Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության առաջատար ընկերություններից է: Տարեկան շրջանառությունը (2018-2019թթ.) աճել է 21%-ով ($1.8 մլրդ.-ից՝ $2.2 մլրդ.)[7]: Պետական պատվերներին զուգահեռ իր արտադրանքն Aselsan-ը արտահանում է ավելի քան 60 երկիր: Ընկերության գործունեության շրջանակն ընդգրկում է կապի և տեղեկատվական տեխնոլոգիաները, միկրոէլեկտրոնիկան, ռադարների և էլեկտրոնային ռազմական համակարգերի արտադրությունը, պաշտպանական տեխնոլոգիան, տրանսպորտը և էներգետիկան: Ասոցացված ընկերություններ ունի Ադրբեջանում, Ղազախստանում, Սաուդյան Արաբիայում, ԱՄԷ-ում, 2020թ. սեպտեմբերից՝ Ուկրաինայում:
2. **Turkish Aerospace Industries (TAI)**-(53-րդ հորիզոնական): Ընկերության շրջանառության աճը տարվա կտրվածքով կազմել է 42% ($1.3 մլրդ.-ից՝ $1.85 մլրդ.): Ընկերության գործունեության հիմնական ոլորտներն են օդատիեզերական համակարգերի զարգացումը, ուղղաթիռների, օդանավերի արտադրությունն ու արդիականացումը: Արտադրում է նաև ԱԹՍ-ներ (TAI Gözcü, TAI Anka, TAI Aksungur) ու արբանյակներ (Göktürk-1, Göktürk-2 և այլն):
3. **BMC**-(89-րդ հորիզոնական): Ընկերության տարեկան շրջանառությունը նվազել է 4%-ով ($554 մլն.-ից մինչև $533 մլն.): BMC-ն ավտոբուսների, բեռնատարերի, երկաթուղային տրանսպորտային միջոցների, զրահամեքենաների առաջատար արտադրողն է: Այս համատեղ ձեռնարկությունը ձգտում է մենաշնորհային և

[6] Metin Gurcan, Is Turkish defense industry's 'success story' turning sour?, http://www.al-monitor.com/pulse/originals/2020/05/turkey-defense-industry-success-story-turns-sour-sipri.html
[7] Top 100 for 2020, http://people.defensenews.com/top-100/

գերիշխող դիրք ձեռք բերել թուրքական արդյունաբերության, մասնավորապես, ցամաքային տրանսպորտային միջոցների և ինքնաթիռների ռեակտիվ շարժիչների արտադրության մեջ: Ի դեպ, ընկերությունը պատկանում է Էրդողանի մտերիմ էթեմ Սանջակին, որին պատկանում է ձեռնարկության բաժնետոմսերի 25%-ը, և Օզթուրք ընտանիքին (25.1%): Մնացած 49.9%-ը պատկանում է Քաթարի Զինված ուժերի Արդյունաբերության կոմիտեին[8]:

4. **Roketsan**-(91-րդ հորիզոնական): 2019թ. համատեղ ընկերության շրջանառությունն ընկել է 1%-ով ($522 մլն.-ից մինչև $515 մլն.): Roketsan-ը հրթիռների և հրթիռային համակարգերի, հակատանկային հրթիռային համակարգերի, ավիացիոն հրթիռների, հրթիռային կոշտ վառելիքի, ինչպես նաև հրթիռների մետաղական/պլաստիկ մասերի առաջատար արտադրողներից է: Ընկերության բաժնետոմսերի 55,34%-ը պատկանում է Թուրքական զինված ուժերի զարգացման հիմնադրամին (TSKGV), բաժնետերեր են Aselsan-ը (14,90%), Havelsan-ը (4,50%) և այլ թուրքական ընկերություններ [9] : Roketsan-ը 2011թ. արտահանել էր $155 մլն.-ի սպառազինություն, սակայն վերջին տարիներին արտահանման ծավալները կտրուկ նվազել են՝ հասնելով $10 մլն.-ի[10]:
5. **STM**-(92-րդ հորիզոնական): STM-ն գլխավորապես հայտնի է ռազմանավերի և կիբերպաշտպանության համակարգերի ստեղծմամբ, սակայն վերջին տարիներին շեշտը դրել է նաև հարվածային և ինքնառչնչացվող (կամիկաձե) ԱԹՍ-ների արտադրության վրա: Նախատեսում է ստեղծել հարվածային և հետախուզական ԱԹՍ-ներ Թուրքիայի ռազմածովային ուժերի համար: STM-ն մասնակցում է նաև TCG Anadolu (կամ՝ TCG Anatolia L-400) թեթև ավիակրի և Թուրքիայի ռազմածովային ուժերի համար նախատեսված ռազմանավերի արտադրությանը, որոնք պետք է մատակարարվեն 2021-2023թթ.[11]: Բացի այդ,

[8] Abdullah Bozkurt, How Erdoğan rushed to gift Turkey's multibillion dollar tank factory to cronies, Qatar, https://nordicmonitor.com/2019/01/how-erdogan-rushed-to-gift-turkeys-multi-billion-tank-factory-to-cronies-qatar/
[9] https://www.roketsan.com.tr/?current_ajax_id
[10] Savunmadaki ihracat rekorunun kahramanları, https://www.ntv.com.tr/ekonomi/savunmadaki-ihracat-rekorunun-kahramanlari,nf2-6wK8wkOA7s7Cj2JiLA
[11] Milli fırkateyn için yerli güç birliği, https://www.aa.com.tr/tr/bilim-teknoloji/milli-firkateyn-icin-yerli-guc-birligi-/1861858

ընկերությունը պատվերների շրջանակներում ռազմանավեր է արտադրում Պակիստանի զինված ուժերի համար[12]:

6. **FNSS Defence Systems**-(98-րդ հորիզոնական): FNSS-ը մասնավոր համատեղ ձեռնարկություն է, որը պատկանում է թուրքական Nurol հոլդինգին (51%) և բրիտանական BAE Systems կորպորացիային (49%): Հիմնականում արտադրում է զրահապատ փոխադրամիջոցներ՝ տանկեր, անվային ընթացամասով զրահամեքենաներ, ինչպես նաև զրահապատ աշտարակներ: Ներկայում Modern Medium Weight Tank (MMWT) ծրագրի շրջանակներում FNSS-ը ինդոնեզիական «PT Pindad» ընկերության հետ համատեղ արտադրում է Kaplan MT տիպի տանկեր: Ինդոնեզիան որպես ներդրող առաջին փուլում ստանալու է 18 տանկ, իսկ հետագայում նախատեսում է ձեռք բերել ևս 200-ը[13]: Նշենք, որ այս տանկերի ձեռքբերմամբ հետաքրքված են Ֆիլիպինները, Բանգլադեշը և աֆրիկյան մի քանի երկրներ[14]:

Վերջապես թուրքական ևս մեկ ընկերություն՝ **Havelsan (Hava Elektronik Sanayii)-ը**, զբաղեցրել է 99-րդ հորիզոնականը: Ընդ որում, այն TOP 100-ի նորեկներից է: Ընկերության բաժնետոմսերի 98%-ը պատկանում է Թուրքական զինված ուժերի զարգացման հիմնադրամին (TSKGV): Ընկերությունը հայտնի է իր համակարգչային ծրագրերի (գրում են կոդեր ռազմական տեխնոլոգիաների համար) և վիրտուալ սիմուլյատորների (վիրտուալ հարթակներ) ստեղծմամբ: Այնտեղ պատրաստվում են ռազմական և քաղաքացիական նշանակության ավիացիայի օդաչուներ[15]: Արտադրանքը գլխավորապես արտահանում է Պակիստան, Մալայզիա և Օման: Այս տարեսկզբին օմանական ընկերություններից մեկի հետ այդ երկրում հիմնել է համատեղ ձեռնարկություն (**HAVELSAN Technology Oman LLC**)[16]:

---

[12] En büyük savunma ihracatı... İmzalar atıldı!, https://www.hurriyet.com.tr/ekonomi/en-buyuk-savunma-ihracati-imzalar-atildi-41547475

[13] Türk Kaplanı'nın taliplileri artıyor, https://www.aa.com.tr/tr/ekonomi/turk-kaplaninin-taliplileri-artiyor/1726200

[14] Philippines, Bangladesh to Procure Turkish-Indonesian Kaplan MT Medium Tanks, http://defpost.com/philippines-bangladesh-procure-turkish-indonesian-kaplan-mt-medium-tanks/

[15] https://www.havelsan.com.tr/sektorler/egitim-ve-simulasyon

[16] Savunmadaki ihracat başarısı şirkete dönüştü, https://www.aa.com.tr/tr/ekonomi/savunmadaki-ihracat-basarisi-sirkete-donustu/1697521

Արտահանման և ներմուծման վիճակագրությունը

Արտահանում: Ստոկհոլմի խաղաղության միջազգային հետազոտական ինստիտուտի (SIPRI) տվյալների համաձայն՝ 2003-2019թթ. Թուրքիայի ռազմական արտահանումը կազմել է $2.199 մլրդ.: Թուրքական սպառազինություն ներկրող երկրների առաջին եռյակը գլխավորում են Թուրքմենստանը ($407 մլն.)[17], Սաուդյան Արաբիան ($384 մլն.) և Պակիստանը ($254 մլն.): Նրանց հաջորդում են Մալայզիան ($228 մլն.), ԱՄԷ-ն ($205 մլն.), Օմանը ($143 մլն.), Քաթարը ($95 մլն.), Ադրբեջանը ($93 մլն.), Իրաքը ($69 մլն.) և Բահրեյնը ($63 մլն.):



Գծապատկեր(1)

Նույն ժամանակաշրջանում Թուրքիան սպառազինություն է արտահանել Վրաստան ($56 մլն.), Նիգերիա ($31մլն.), Թունիս ($29 մլն.), Բանգլադեշ ($17 մլն.), Ռուսաստան ($16 մլն.), Եգիպտոս ($13 մլն.), Քուվեյթ ($11 մլն.) և այլ երկրներ:

Ինչ վերաբերում է 2018-2019թթ.-ին, ապա, ինստիտուտի տվյալներով, արտահանել է $509 մլն.-ի սպառազինություն: Հիմնական գնորդներն են եղել Օմանը ($143 մլն.), Պակիստանը ($104 մլն.) և ԱՄԷ-ն ($82 մլն.): Ի դեպ, Սաուդյան Արաբիան ու Թուրքմենստանը, որոնք երկար ժամանակ Թուրքիայի հիմնական գնորդներն էին, տվյալ ժամանակաշրջանում չեն ներմուծել: Ուշագրավ է, որ Թուրքիան փորձում է

[17] Միջին Ասիայի թյուրքալեզու պետությունների հետ ռազմատեխնիկական ոլորտում Թուրքիայի հետ համագործակցության մասին մանրամասն տես, Simavoryan Arestakes. (2019). Turkey's Military-Technical Cooperation With the Turkic Nations. DOI: 10.5281/zenodo.5730933

նվաճել զենքի արտահանման նոր շուկաներ ասիական տարածաշրջանի (Հարավ-արևելյան Ասիա) և աֆրիկյան մայրցամաքի երկրներում: Մասնավորապես, վերջին տարիներին սպառազինություն է մատակարարել Ռուանդա, Մավրիտանիա, Գանա, Բուրկինա Ֆասո, Սենեգալ, Չադ, Լիբիա, Մալայզիա, Ֆիլիպիններ և այլ երկրներ:



Գծապատկեր(2)

Սովորական սպառազինությունների ՄԱԿ-ի ռեգիստրի զեկույցի համաձայն՝ 2018-2019թթ. Թուրքիայից այս երկրները ներմուծել են անվային ընթացամասով զրահամեքենաներ, դիպուկահար հրացաններ, ատրճանակներ և այլն [18] : 2018թ. տվյալներով՝ Թուրքիայից սպառազինության արտահանած ընկերություններն են.

1. Turkish Aerospace Industries (TAI) - $503 մլն.
2. Tusaş Engine Industries (TEI) - $286 մլն.
3. FNSS Defence Systems - $175 մլն.
4. Aselsan - $142մլն.
5. Alp Aviation - $107 մլն.
6. Otokar - $95 մլն.
7. Nurol Holding - $82 մլն.
8. Mechanical and Chemical Industry Corporation (MKEK) - $55 մլն.
9. BMC - $41մլն.
10. Havelsan - $27 մլն.
11. Roketsan - $10 մլն.

[18] Turkey 2019, https://www.unroca.org/turkey/report/2019/

12. Karel Electronics - $3 մլն.[19]

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Թուրքիայի պաշտպանական և օդատիեզերական արդյունաբերության արտադրողների ասոցիացիայի (SASAD) տվյալները, որոնք վերաբերում են ռազմական և ավիացիոն (ներառյալ քաղաքացիական) ոլորտի արտահանումներին: Ընկերության հրապարակած զեկույցի համաձայն՝ վերոնշյալ ոլորտի արտահանումներն 2019թ. կազմել է $2.740 մլրդ.: Հիմնականում արտահանել է քաղաքացիական և ռազմական նշանակության ավիացիայի պահեստամասեր, անօդաչու թռչող սարքեր, ռազմամթերք (հրթիռներ, փամփուշտներ, արկեր), զրահամեքենաներ և այլն[20]:

Իսկ 2020թ. հունվար-փետրվար ամիսներին արտահանումը կազմել է $348 մլն.: Թուրքական պաշտպանական և օդատիեզերական արդյունաբերական արտադրանքի հիմնական ներկրողներն են եղել ԱՄՆ-ն ($131 մլն.), Գերմանիան ($38 մլն.), ԱՄԷ-ն ($26 մլն.), Հնդկաստանը ($23 մլն.), Նիդերլանդները ($16 մլն.), Քաթարը ($12 մլն.), Շվեյցարիան ($12 մլն.), Մեծ Բրիտանիան ($8 մլն.), Ադրբեջանը ($8 մլն.), Ֆրանսիան ($6 մլն.)[21]:

Ներմուծում: Ստոկհոլմի խաղաղության միջազգային հետազոտական ինստիտուտի տվյալներով՝ Թուրքիան 2003-2019թթ. ներմուծել է $11.985 մլրդ.-ի սպառազինություն, հիմնականում՝ ռազմական ինքնաթիռներ ($4.322 մլրդ.), նավեր ($1.571 մլրդ.), հրթիռներ ($1.402 մլրդ.), զրահատեխնիկա ($1.344 մլրդ.), հրետանի ($1.296 մլրդ.), տվիչներ[22] ($987 մլն.), օդային պաշտպանության համակարգեր ($328 մլն.) և այլն: Վերոհիշյալ ժամանակահատվածում միլիարդ դոլարը գերազանցող սպառազինություն են մատակարարել ԱՄՆ-ն, Գերմանիան, Հվ. Կորեան և Իտալիան (տես գծապատկեր 3):

[19] Savunmadaki ihracat rekorunun kahramanları, https://www.ntv.com.tr/ekonomi/savunmadaki-ihracat-rekorunun-kahramanlari,nf2-6wK8wkOA7s7Cj2JiLA
[20] https://www.sasad.org.tr/uploaded/Sasad
[21] Savunma ve Havacılık İhracatı yükselişe devam ediyor, https://www.savunmasanayist.com/savunma-ve-havacilik-ihracati-yukselise-devam-ediyor/
[22] Տվիչներ:



Գծապատկեր (3)

Ինչպես ցույց են տալիս ինստիտուտի կողմից հրապարակված տվյալները, վերջին երկու տարիներին (2018-2019թթ.) Թուրքիան ներմուծել է $1.423 մլրդ.-ի սպառազինություն: Առաջատար արտահանողներն են Իտալիան ($372 մլն.), ԱՄՆ-ն ($357 մլն.), Իսպանիան ($292 մլն.) և Ռուսաստանը ($280 մլն.): Այս համատեքստում նշենք, որ Չինաստանը, Մեծ Բրիտանիան և Իսրայելը վերջին տարիներին մատակարարումներ ընդհանրապես չեն իրականացրել[23]:

Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ զենքի արտաքին նոր շուկաներ նվաճելու նպատակով Թուրքիան նպատակադրվել է միջազգային մակարդակով զարգացնել փոխգործակցությունը ռազմարդյունաբերության ոլորտում: Ըստ էության, երկկողմ և բազմակողմ համագործակցությունից բխող քայլերը չեն սահմանափակվի միայն սպառազինության վաճառքով: Վերջին տարիներին արձանագրված միտումները ցույց են տալիս, որ թուրքական ռազմարդյունաբերական համալիրը փնտրում է նոր գործընկերներ՝ համատեղ ընկերություններ և արտադրություն հիմնելու համար, ինչպես նաև ձգտում է ստանալ նոր տեխնոլոգիաներ: Բնական է, ոլորտն այնպիսին է, որ յուրաքանչյուր փոփոխություն որոշիչ կարող է լինել՝ սկսած ընկերությունների կարողություններից մինչև արտահանման սահմանափակումներ:

[23] Stockholm International Peace Research Institute. http://armstrade.sipri.org/armstrade/html/export_values.php

Գրականություն

[1]. Abdullah, B. (2019). How Erdoğan rushed to gift Turkey's multibillion dollar tank factory to cronies. Qatar. https://nordicmonitor.com/2019/01/how-erdogan-rushed-to-gift-turkeys-multi-billion-tank-factory-to-cronies-qatar/

[2]. En büyük savunma ihracatı... İmzalar atıldı!. https://www.hurriyet.com.tr/ekonomi/en-buyuk-savunma-ihracati-imzalar-atildi-41547475

[3]. Metin, G. (2020). Is Turkish defense industry's 'success story' turning sour?. http://www.almonitor.com/pulse/originals/2020/05/turkey-defense-industry-success-story-turns-sour-sipri.html

[4]. Milli fırkateyn için yerli güç birliği. https://www.aa.com.tr/tr/bilim-teknoloji/milli-firkateyn-icin-yerli-guc-birligi-/1861858

[5]. Philippines, Bangladesh to Procure Turkish-Indonesian Kaplan MT Medium Tanks. http://defpost.com/philippines-bangladesh-procure-turkish-indonesian-kaplan-mt-medium-tanks/

[6]. Savunma yatırımları 35 milyar doları geçti. https://www.yenisafak.com/ekonomi/savunma-yatirimlari-35-milyar-dolari-gecti-3163928

[7]. Savunma ve Havacılık Sanayii İmalatçılar Derneği. Performans raporu 2019. https://www.sasad.org.tr/uploaded/Sasad-Performans-Raporu-2019.pdf

[8]. Savunmadaki ihracat başarısı şirkete dönüştü. https://www.aa.com.tr/tr/ekonomi/savunmadaki-ihracat-basarisi-sirkete-donustu/1697521

[9]. Savunmadaki ihracat rekorunun kahramanları. https://www.ntv.com.tr/ekonomi/savunmadaki-ihracat-rekorunun-kahramanlari,nf2-6wK8wkOA7s7Cj2JiLA

[10]. Savunma ve Havacılık İhracatı yükselişe devam ediyor. https://www.savunmasanayist.com/savunma-ve-havacilik-ihracati-yukselise-devam-ediyor/

[11]. Savunma ve Havacılık Sanayii Performans Raporu-2020. https://www.sasad.org.tr/uploaded/Sasad

[12]. Savunmadaki ihracat rekorunun kahramanları, https://www.ntv.com.tr/ekonomi/savunmadaki-ihracat-rekorunun-kahramanlari,nf2-6wK8wkOA7s7Cj2JiLA

[13]. Simavoryan, A. (2019). Turkey's Military-Technical Cooperation With the Turkic Nations. DOI: 10.5281/zenodo.5730933

[14]. Stockholm International Peace Research Institute. http://armstrade.sipri.org/armstrade/html/export_values.php

[15]. Türk Kaplanı'nın taliplileri artıyor. https://www.aa.com.tr/tr/ekonomi/turk-kaplaninin-taliplileri-artiyor/1726200

[16]. Turkey 2019. https://www.unroca.org/turkey/report/2019/

[17]. Top 100 for 2020. http://people.defensenews.com/top-100/

[18]. 2019-2023 Stratejik plan. https://www.ssb.gov.tr/Images/Uploads/MyContents/V_20191213172340705166.pdf